


Ա.Կ. ԼԵԲԵԴՅԵՎ



# ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՌՈԲԻՆԶՈՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՎ 1937 ՅԵՐԵՎԱՆ



A P M.  
3-7472

882-93

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ն. Կ. ԼԵԲԵԴԵՎ

ԱՐԻԱՆԳԵԼՍԿԻ  
ՌՈԲԻՆԶՈՆՆԵՐԸ



ՊԱՏՄՎԱԾՔ

ՉՈՐՍ ՅԵԶՐԱԲԵՆԱԿՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՇԱՑԻՆ ՆՈՎԻ  
ԱՆԲՆԱԿ ԿՊՀՈՒՄ



ԳԵՂԱՆԱԴ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՂԵՎՄԱՆ 1937



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>Եջ</i>
Ո՞վ եր Ռոբինզոնը . . . . .	5
Բեվեռային ծովը . . . . .	5
Ինչո՞ւ են հարուստ բեվեռային յերկրները . . . . .	10
Նավաբեկյալները . . . . .	19
Մենակ՝ սաոցե անապատում . . . . .	22
Յերկրորդ ձմեռումը . . . . .	28
Փրկությունը սաոցի գերությունից . . . . .	31

*Թարգմանիչ՝ Հ. Լեռնյան*

*Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան  
Տեխնիկ՝ Խմբագլիք՝ Ի. Վարդանյան*

---

*Գլամյիտի լիազոր Կ— 4621, Պատվեր 862  
Հրատ. 4137. Տիրաժ 4000. Թուղթ*

---

*Յերևան, Պետհրատի տպարան, Լենինի, 65*

## Ո՞Վ ԵՐ ՌՈԲԻՆԶՈՆԸ

Ռոբինզոն են կոչում ամեն մարդու, ով ընկնում է մի վորեւե անընակ տեղ և ապրում այնտեղ բոլորովին մենակ: Այս անունը դալիս է մի անգլիացի նավասառուց՝ Ռոբինզոն Կրուզոյից, վորի պատմությունը հնարել ու նկարագրել է մի անգլիացի գրող սրանից յերկու հարյուր տարի առաջ:

Ռոբինզոն Կրուզոն նավի խորտակումից հետո ընկալ մենակ մի անընակ կղզի: Իր քաջության և հնարագիտության շնորհիվ նա չմեռալ, այլ կղզում ապրեց շատ տարիներ և սովորեց ինքն անել կյանքի համար անհրաժեշտ զանազան բաներ:

Մեր գրքույկում մենք պատմում ենք վոչ թե Ռոբինզոնի հնարյովի պատմությունը, այլ ճշգրիտ յեղելություն Արխանգելսկի չորս արհեստագործ յեղաբանակների մասին: Նրանք ընկան մի ամայի սառցակղզի և այնտեղ ամբողջ վեց տարի ապրեցին բոլորովին մենակ:


## ԲԵՎԵՌԱՅԻՆ ՇՈՒԺԸ

1743 թվի հունիսին Արխանգելսկի նահանգի Մեղքին քաղաքից Սպիտակ ծովը գուրս յեկավ մի վոչ-միծ առագաստանավակ:

Նավակում կային տասնչորս արհեստագործ յեղաբանակներ: Նավակը դեկավարում եր մոտ հիսուն

տարեկան մի մարդ, ավագ լոցման Ալեքսեյ Խիմկովը,  
մնացածներն ավելի յերիտասարդ եյին, բայց բոլորն  
ել ծով տեսած մարդիկ:


Հյուսիսում մարդուն վոչ թե հողը, այլ ծովն ե  
կերակրում: Ծովի ափերին ապրող մարդիկ — յեզրա-  
բնակները — զբաղվում են ծովային արհեստներով և  
ձկնորսությամբ:



Բևեռային ծովի քարտեզը

Դեռևս հինգ հարյուր տարի սրանից առաջ ոռուս առաջին զաղթականները Սպիտակ ծովի ափին սկսեցին այդ արհեստները, և այդ ժամանակից նրանց թոռներն ու թոռների թոռները կերակրվում են ծովային վոր-սորդությամբ: Հողը հյուսիսում վատ և հաց տալիս: Ամառը լինում է կարճ և ցուրտ: Առանց ծովային արհեստի՝ մարդու համար դժվար կլինի ապրուստը հյուսախին յերկրում:

Խիմկովին ու ընկերները դնում եյին ծովային արհեստի: Մի քանի որից նրանց նավակը Սպիտակ ծովից դուրս յեկալ դեպի Բելեռային կամ սառուցյալ ծովի յայն տարածությունը:



Բեռային ծով

Այս ծովը նրա համար և Սառուցյալ կոչվում, վոր նրա յերեսին տարին ամբողջ, ձմռանն ու ամռանը, լողում են մեծ սառցակտորներ և սառցասարեր: Սառուցյալ ցուրտ ծովը ձգվել է ավելի քան չորս

Հաղար կիլոմետր յերկարությամբ և դրեթե նույնքան կիլոմետր լայնությամբ:

Այս ծովում շատ կան կղզիներ և ցամաքներ: Այդ կղզիները ծածկված են հավերժական ձյուն ու սառուց-ցով: Այդտեղ տարեկան ամբողջ ինն ամիս իշխում է կատաղի ձմեռն իր դաժան սառնամանիքներով: Հոկտեմբերից մինչև փետրվար արևն այդտեղ գրեթե յերբեք չի յերեվում յերկնակամարի վրա: Այդ ամբողջ ժամանակամիջոցում հյուսիսում համատարած գիշեր և լինում: Գիշերվա խավարում մոլեգնում են ուժեղ բուքերը: Սառնամանիքը հասնում է հիսուն պատիճանի:

Բայց ամռանն ել հեռավոր հյուսիսում շատ բանով լավ չի, քան ձմռանը: Արեւ թեպետ և հունիս և հուլիս ամիսներին գիշեր-ցերեկ յերկնակամարի վրայե, բայց շատ ցածր ե բարձրանում: Նրա շեղ ճառագայթները վատ են տաքացնում հողը և չեն կարող հալեցնել սառույցի ու ձյան ահագին շերտերը:

Ամռանը Բեվեռային ծովի կղզիներում հինգ-վեց աստիճանից ավելի տաքություն չի լինում, դրա համար ել այդտեղ գրեթե վոչինչ չի աճում: Միայն արեկող տեղերում ե ձյունը գնում, և հողը մերկանում ու հալչում ե, բայց կես մետրից վոչ ավելի: Այդպիսի տեղերում աճում են մոխրագույն մամուռը և կարճ, կոպիտ, վտիտ խոտը:

Այդ ամբողջ ընդարձակ մարզը, ուր գանվում է հյուսիսային սառը ծովը, և այնտեղի բոլոր հողերն ու կղզիները կոչվում են հյուսիսային բեվեռային մարզ: Այդ մարզն այդպես ե կոչվում, վորովհետեւ այդ մասումն ե գտնվում յերկրագնդի հյուսիսային բեվեռը:

Ամենամեծ կղզիները հյուսիսային բեվեռային ծովի այն մասում, վորն ավելի մոտիկ ե մեղ, Նոր Յերկիր կրկնակ կղզին ե և Շպիցբերգեն, կամ, հին անունով, Գրումանտ կղզիները:

Նոր Յերկիրը հեռու յե դանվում Արխանդելսկից։  
Արխանդելսկից մինչև Նոր Յերկիրը ծովով հազար կի-  
լոմետրից ավելի յե։ Իսկ Շպիցբերգեն կղզիները գլո-  
նվում են Նոր Յերկիրց դեպի արևմուտք, մեր Մուր-  
մանսկի ափունքի դեմ։

Նոր Յերկիրի յերկարությունը գրեթե հազար կիլո-  
մետր է, իսկ լայնությունը մի քանի տեղերում յերե-  
սուն, մի քանի տեղերում ել մոտ հարյուր կիլոմետր։  
Նա պատված է բարձր ապառաժ-սարերով։

Յեթե նախարկելու լինենք Նոր Յերկիրի ափերի  
յերկայնքով, ապա կարող ենք տեսնել, թե ի՞նչպես  
լեռները գնալով ավելի ու ավելի յեն բարձրանում։  
Բոլոր լեռները ծածկված են ձյունով ու սառուցով։  
Շատ հաճախ թանձր մառախուղը պարուրում է լեռ-  
նագագաթները, և դրանից լեռներն ավելի բարձր են  
թվում։

Թեե ձմռանը Նոր Յերկիրում ավելի ցուրտ չե, քան  
Սիբիրի շատ տեղերում, բայց և այնպես այնտեղ ծա-  
ռեր չեն աճում. ամառն այնտեղ ընդամենը տասը շա-  
բաթ ե տեսում և տաքությունը յերբեք հինգ-յոթ աս-  
տիճանից ավելի չե լինում։

Միայն մի քանի տեղում, ուր առանձնապես ու-  
ժեղ և տաքացնում արել, մամուռ ու վտիտ խոտ և  
աճում, և տեղ-տեղ յերեվում են սողացող ուռենու և  
տաքածուն կեչու խղճուկ թփիկները։ Բայց Նոր Յեր-  
կիրի ուռենիներն ու կեչիներն ամենելին նման չեն մե-  
րիններին։ Դրանք մինչև անգամ թվուտներ չեն, այլ  
մի քանի սանտիմետր բարձրություն ունեցող մանրիկ,  
սողացող թփիկներ։ Բեմուային ուռենին մի քիչ հի-  
շեցնում ե հապալասի վտիտ թփիկը։ Այնուամենայնիվ  
այդ մանրիկ ուռենին գարնանը փշիկներ ե արձակում  
և ծաղկում։

Ամենից տաք և քամուց փակված տեղերում Նոր  
Յերկիրում աճում ե ճախնամորին և իր հյուսված ձյու-  
ղիկներն ե արձակում աղվեսախաղողը։

Բայց կարճատե ամառը չի կարողանում հալեցնել ամբողջ ձյունը Նոր Յերկրում, և արդեն իսկ ողոստոսին այնտեղ սկսվում են սառնամանիքները, իսկ սեպտեմբերին ձմեռ ել լինում:

Բուսականությամբ ե'լ այլելի աղքատ ու տինուք են մյուս կղզիները Բեվեռային ծովում — Շպիցբերգենը: Շպիցբերգենն ամբողջապես ծածկված ե սրածայր լեռներով, վորի համար ել ստացել ե իր անունը: Շպիցբերգեն նշանակում է «սրածայր լեռներ»:


Շպիցբերգեն կամ Գրումանս կղզիները գտնվում են Նոր Յերկրից գեպի արևմուտք, մոտ հազար կիլոմետր հեռավորության վրա: Շպիցբերգենը և նրա հարեվան կղզիները ծովագնացները հաճախ կոչում են «սոսկալի» յերկիր: Զմեռն այստեղ ինն ամիս ե տեփում, իսկ տարեկան յերեք ամիս արևը վոչ մի անդամ չի բարձրանում յերկնքի վրա: Մթության և ցրոի մեջ հաճախ մոլեզնում են մըրիկները և ձյունախառն բուքերը:

Այստեղ քիչ են հանդիպում նույնիսկ այն խղճուկ ու վտիտ բույսերը, վոր մենք գտնում ենք Նոր Յերկրում: Միայն մուգ շագանակագույն մամուռն ե մի քանի տեղում պատրում ապառաժ ժայռերը, վորոնք ամռանն ազատիում են ձյունից: Ամայի ու վայրենի յեն Շպիցբերգենի ափերը նույնիսկ ամառները:

## Ի՞նՉՈ՞Վ ԵՆ ՀԱՐՈՒՍ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Բեվեռային յերկրներն ամենից անբարերեր յերկրներն են յերկրագնդի յերեսին: Բայց դրա փոխարեն Բեվեռային ծովում շատ կան վոչ միայն զանազան ձկներ, այլև թանկարժեք ծովագաղաններ — կետեր, ծովացուլեր, ծովաչներ և ուրիշ կենդանիներ:

Բեվեռային ծովում ամենից ավելի հաճախ հանդիպում են ծովացուլեր: Ծովացուլերը մեծ կենդանիներ:



Ծովացուլեր սառցակտորի վրա

ներ են յերեք-չոքս մետր յերկարությամբ, յերբեմն  
ե'լ ավելի: Նրանք յերկար և հաստ ժանիքներ ունեն:  
Ծովացուլի ժանիքի վոսկրից զանազան բաներ են շի-  
նում: Ծովացուլերը գնահատվում են նաև իրենց ճար-  
պի և հաստ կաշվի համար:

Ծովացուլերից բացի, Բելեռային ծովում կան  
նաև ծովաշներ: Ծովաշունը մի քիչ նման է ծովացիւ-  
մն, միայն հասակով ավելի փոքր է և ժանիքներ չու-  
նի: Ծովաշները ծովում հանդիպում են ամբողջ հոտե-  
րով:


Իրենց կարճ վոտքերի ոգնությամբ, վորոնք քա-  
րեր են կոչվում, ծովաշունը հիանալի լողում է: Ծո-  
վաշունը սառը ջրից չի վախենում, վորովհետև նա ել  
ծովացուլի պես իր կաշվի տակ ունի ճարպի հաստ  
շերտ, վորի միջով ցուրտն անց չի կենում:

Ծովացուլերը և ծովաշները վոչ ամբողջ ժամանակ  
են ջրում անցկացնում: Հաճախ նրանք դուրս են սր-  
դում սառցակտորի վրա և ամառը սիրում են տաքա-  
նալ արեի տակ: Ծովաշները սիրում են կողքի վրա  
պառկել: Նրանք շատ ծույլ են և, սառուցի վրա պառ-  
կելով, յերբեմն միայն զեպի արկն են շուռ տալիս կամ  
վուրը, կամ մեջքը, կամ կողքը:

Ծովաշունն ել ծովացուլի պես բազմաթիվ ոգտա-  
կար նյութեր և տալիս մարդուն: Ծովաշան ճարպից  
պատրաստում են ոճառ, ոծիչ նյութեր, իսկ հյուսի-  
սում ծովաշան ճարպը նավթի փոխարեն վառում են  
լամպերում: Ծովաշների միան ուտում են, իսկ կաշվից  
կարում են հագուստ, վոտնաման և զանազան իրեր,  
որինակ՝ աշակերտական պայուսակներ:

Բելեռային ծովում կան նաև կետեր: Կետը ծովա-  
յին վիթխարի կենդանի յէ: Իր տեսքով նա մեծ ձուկ  
և հիշեցնում: Կետերը յերբեմն 25 մետր յերկարու-  
թյուն են ունենում: Կետերի բերանն այնքան մեծ է,  
վոր մի մեծ նավակ հետությամբ կմտնի այնտեղ,  
բայց կետն ատամներ չունի: Ատամի փոխարեն վերեկի

Ֆնոտի վրա աճում են մի ամբողջ շարք յերկար, ձկուն յեղջերաթերթիկներ։ Այդ յեղջերաթերթիկները ներքեվի ծայրում բաժանվում են առանձին թելերի և կազմում բերնից կախված մի տեսակ ծոպ, մի քիչ հիշեցնելով բեխերը, վորի համար ել դրանք կոչվում են կետի բեխեր։



Կետը թևեռային ծովում

Կետերը սնվում են զանազան ծովային մանր կենդանիներով, ձկնականջներով և փոքրիկ ձկներով։ Յերբ կետն ուտնել ե ուկում, թեթևակի բաց ե անում իր ահագին յերախը և առաջ լողում։ Զրի հետ միասին նրա յերախն են գնում ձկնիկներ և հարյուրավոր զանազան մանր կենդանիներ։ Կետի բերանը մտնող ջուրը դուրս ե հոսում բերանի անլյուններից, իսկ ձուկը յեղջերաթերթիկները պահում են կետի բերանում։

Կետի աչքերը մանր են։ Վոտքեր բոլորովին չկան, իսկ նրանց փոխարեն առջեկից կա յերկու լողաթաղանթ։ Հետելից կետը պոչ ունի, վոր նման ե ձկան

պիտին: Գլխի գագաթին կետը ուղևած ունի, վորով շընչում է: Դրա համար կետը գլխի վերելի մասը ջրից դուրս ե պահում: Ծանր ջունչ քաշելով, նա զեպի ողնենետում պղպջակների և գոլորշու շատրվան:


Կետերն ապրում են սովարաբար մենակ կամ ընտանիքներով — հայրը, մայրը և մեկ կամ յերկու ձագ: Բայց յերբեմն կետերը միանում են մեծ հոտերով: Զմեռները նրանք բեվեռային ծովից հեռանում են ավելի տաք ծովերը, բայց ամառները դարձյալ հյուսիս են վերադառնում:

Ինչպես ծովաչների և ծովացուլերի, այնպես ել կետերի կաշվի տակ ճարպի հաստ շերտ կա, վորը նրանց պաշտպանում ե ցրտից:

Կետի ճարպն ու բեկը շատ են գնահատվում, ուստի շատ արհեստագործ մարդիկ բեվեռային ծովն են գնում կետեր վորսալու համար:

Ծովացուլերը, ծովաչները և կետերը թեպետ և ապրում են բեվեռային ծովերում, բայց դեռևս բեվեռային մարզի խոկական տերերը չեն հանդիսանում: Ծովային գաղաններին, ծովաչներին և ծովացուլերին վորսում ե մի գիշատիչ, բեկուային մարզի խոկական տերը՝ սպիտակ արջը կամ, ինչպես նրան կոչում են հյուսիսում, ոչկույտ: Սպիտակ արջը նման և ուղարկան արջին, միայն թե ավելի յերկար ե նրանից և նրա բուրդը սպիտակ ե, արծաթավուն: Պառաված արջերի բուրդը մի քիչ գեղնում ե:

Զմեռը սպիտակ արջը չի քաշվում վորջը, ինչպես մեր անտառային մուգ-շագանակաղույն արջը: Մենակ կամ յերկուսով նա թափառում և սառցաղաշտերում և հետամուա լինում անզդույշ ծովաչներին: Սպիտակ արջերը սնվում են նաև ձկով, վորին ճարպկորեն վորսում են ջրում: Ամառը նրանք թռչունի ձու և թռչունի ձագ են հաշակում: Սպիտակ արջը ցրտից չի վախենում: Եղ արջը նույնիսկ ձմեռն և ճուտեր ծնում: Դեկտեմբեր ամսին եղ արջը յերկու-յերեք ճուտ և բե-



Սպիտակ արջ

բում : Մայրը նրանց պահում ե սառցե վորջում , բայց նրանք շուտ են մեծանում և գարնանն արդեն իսկ շան հասակի յեն լինում :

Գարնանը մայր-արջը փշում ե սառցե վորջը և իր ձագերին ազատ աշխարհ է հանում : Նրանց սովորեցնում ե լողալ և ձուկ վորսալ : Զագերն ամբողջ ամառը մոր հետ են լինում և միայն աշնանն են թողնում նրան ու սկսում ապրել ինքնուրույն կյանքով :

Սպիտակ արջը , չնայած իր մեծության հիանալի լողվոր ե : Նա սուղվում է սառը ջրի մեջ սառուցների արանքում , մագլցում սուռցալեաները և նայում , թե վորտեղ են գտնվում ծովագաղանները — ծովացուլերն ու ծովաշները : Սառուցի վրա նկատելով ծովացուլին , սպիտակ արջը գնում է քամու . կողմից և կամաց մոտենում ծովացուլին : Հասնելով նրան , արջը ձգտում է ճիրանները խրել նրա ծոծրակը : Ծովացուլը թափահարվում է , ցավից մռնչում և դեպի ջուրը մագլցում : Արջը մեկ անգամ ել է ճիրանները լիրում ծովացուլի ծոծրակը , և արջի ու ծովացուլի միջև մահցու կոփի է սկսվում : Յերբեմն ծովացուլին հաջողվում է հասնել սառուցի յեղին և ջուրը նետվել : Արջը նետվում է նրա հետեւից և արդեն ջրում վերջ է տալիս նրան :

Սպիտակ արջը յերբեմն ծովաշների դեմ իսկական վորսորդություն է կազմակերպում : Նկատելով , վորլողում են ծովաշները , աբջը նստում է սառուցի յեղին և հսկում : Հենց վոր տեսնում է ջրից դուրս պարզված ծովաշան գլուխը , արջը ճարպկությամբ բռնում է նրան : Մի քանի բոպեյից ծովաշունը լսեղդամահ է արված , և արջը նրա դիմակը դուրս է քաշում սառուցի վրա ու լափում :

Ամառը բեվեռային յերկիրները , Սառուցյալ ծովի կղղիներն են թռչում բազմաթիվ զանազան ծովաշին թռչուններ : Թռչուններն այնքան շատ են լինում այստեղ , վոր հաճախ ամբողջապես ծածկում են վիթ-

A  $\frac{\pi}{35616}$

խարի ապառաժներ ու ժայռեր։ Այնպիսի տեղեր, ուր շատ թռչուններ են բուն դնում, կոչվում են «թռչնաքաղաք» կամ «թռչնաշուկա»։ Այդ տեղերում իրոք վորմ շտական աղմուկ է տիրում, ինչպես շուկայում։


Բելեռային յերկրներն ամենից շատ են գալիս ճայրը, ջրագուալները, սուզահավերը, սագերը, ծովային բաղերը և այդերուկները։ Այդերուկը տալիս ե շատ փափուկ և արժեքավոր բմբուլ։

Այսպիսով, կարձատե ամառվա ընթացքում բելեռային յերկրներում կյանքը յեռում է։ Բայց հենց վոր գալիս և ողոստոսը և սկսվում են ցրտերը, կյանքը նորից մեռնում է։ Թռչունները գրեթե բոլորը թռչում են դեպի հարավ։ Ծովաշներն ու ծովացուլերը լողում են այնաեղ, ուր ավելի տաք է։ Զմեռելու յեն մնում սպիտակ արջերը, սպիտակ և բելեռային աղվեսները, վորոնք չափչփում են սառցաղաշտերը, իրենց համար մնունդ փնտուելով։

Ծովային գաղանը, ձուկը և թռչունը վաղուց են մարդկանց գեղի հեռավոր հյուսիս գրավել։ Ամեն ամառ հյուսիսային ծովերում և բելեռային մարդի կղզիներում յերեվում են հաղաբավոր արհեստաղործ մարդիկ։ Յերկայմանավերով, կարուսներով և ձրկնորսանավակներով կամ մեծ մակույկներով այդ խիզախ արհեստաղործներն իրենց մայրենի տեղերից հաղարավոր կիլոմետր հեռու յեն գնում և այստեղ ծովագաղաններ սպանում, կետ ու արջ վորսում, այդերուկի բմբուլ հավաքում։

Դրա համար եր, վոր իր ընկերների հետ դեպի բելեռային ծովը ճանապարհ ընկավ Ալեքսեյ Խիմկովը։ Լողում եյին նրանք դեպի նոր Յերկիրն, ուր առաջ յեղել եյին ամեն ամռանը։





«Թունաշուկա» թևեռային ծովի կղզում

Ութ որ իբար վրա լսվ յեղանակ եր: Մակույկը ակսել եր մոտենալ արդեն Նոր Յերկիցին: Ծովի վրա յերեվում եյին ձյունապատ և սառցապատ բարձր լեռներ:

— Ե՛ւ, տղե՛րք, — ասաց Խիմկովն իր ընկերներին, — վաղը տեղը կհասնենք: Մի քիչ կհանգստանանք և աշխատանք կսկսնք:

Բայց յերեկոյան դեմ հանկարծ ծովի վրա ուժեղ փոթորիկ բարձրացավ: Ծովի յերեսով մեծ ալիքներ չարժվեցին: Փոքրիկ մակույկը տաշեղի պես դես ու գեն եր նետում: Սառցաբույր ջուրը վողոզում եր նապակի տախտակամածը: Քամին մակույկն արագ քշում եր ու հեռացնում Նոր Յերկրից:

— Բաներս բուրդ ե, տղե՛րք, — ասաց լոցմանը: — Փոթորիկը հանաք չի անում, յերեվի Նոր Յերկրի յերեսն ել չենք տեսնի:


Բոլորը վհատվեցին: Ամբողջ յերեք որ մոնչաց ծովը: Միայն չորրորդ որը փոթորիկը հանդարտվեց: Յերկնակամարում յերեվաց արեգակը: Բայց արեվն ել չմխիթարեց արհեստագործներին: Նրանք տեսան, վոր ամբողջ ծովը ծածկված ե լողացող սառցակույտերով: Սառցակույտերը շրջապատեցին նավակը, և սառույցի հետ միասին նավակը քշեց դեպի արևմուտք: Յերկու որ սառույցները նավակը քշում եյին ծովի յերեսով: Վերջապես, նավագնացներն իրենց առջեռում տեսան ինչվոր ցամաք և սրածայր լեռներ:

— Բայց սա Գրումանտ կղզին ե, — ասաց Խիմկովը: — Այ թե ուր քշեց մեզ:

Բոլոր արհեստագործներն այնքան ջարդվել եյին փոթորկից, վոր հաղիվ-հաղ եյին վոտքի վրա կանգնում:

Խիմկովը վճռեց մոտենալ կղզուն և հանգիստ տալ իր ընկերներին: Նա հիշեց, վոր մի քանի տարի առաջ

Գրումանտում ձմեռել եյին մեղենցի կետորսները և  
այստեղ խրճիթ կառուցել։ Յերբ Խիմկովն իր ընկերնե-  
րին հաղորդեց կղզուն մոտենալու վորոշման մասին,  
ըուրը սաստիկ ուրախացան։ Բայց Խիմկովը ճիշտ  
չգիտեր, թե վո՞րտեղ է դտնվում մեղենցի կետորսնե-  
րի խրճիթը, իսկ մինչ այդ սառույցները թույլ չեյին  
տալիս, վոր նավակը մոտենա ափին։ Մինչև ափը դեռ  
կես կիլոմետրից ավելի կար։



Շպիցբերգեն

— Դե՛հ, տղե՛րք, — ասաց Խիմկովը, — դուք մնա-  
ցեք մակույկում, իսկ յես մի յերեք հոգու կվերցնեմ և  
ափը կգնամ, խրճիթը կփնտուեմ։ Հենց վոր դանենք,  
կվերադառնանք և այն ժամանակ մի կերպ դուրս  
կողընենք դեպի ափը։

Խիմկովն իր հետ վերցրեց իր վորովի իվանին և  
յերկու նավատիների՝ Ստեպան Շարապովին և Ջո-  
դոր Վերիգինին։ Նրանք վերցրին համենայն դեպս մի  
հրացան, տասներկու լիցքի վառող, մի կացին, մի  
փոքրիկ կաթսա, ալյուրի պաշար, մի դանակ, մի քիչ

ծխախոտ, հրահան՝ կըակ ստանալու համար, և գնացին կղզին:

Նրանք յերկար ժամանակ ճանապարհ բաց արին սառույցների միջով, շրջանցելով չսառած տեղերը: Վերջապես, հասան ափը: Վո՞չ մի ծառ, լո՞չ մի թուփ, միայն քար և ձյուն, իսկ հալած տեղերում՝ դանդրավուն մամուռ:

Ափով գնալով մի չորս կիլոմետր, Խիմկովը և նրա ուղեկիցները տեսան կիսափուլ մի խճճիթ: Խրճիթի մոտ վառելափայտ եր դարսված: Տարրինակ եր այդ մեռած կղզում մարդկային բնակարան տեսնել:

Խիմկովը մտավ խճճիթը: Մի անկյունում կալից շինված կաճճիթն եր, մյուսում՝ վորմնատախտը:

Ստեպան Շարապովը և Ֆյոռոր Վերիգինը փայտ բերին ու կըակ վառեցին: Կաթսայով ջուր յեռացրին, յերկու ըուսը ալյուր լցրին: Կերան ապուրը: Մի քիչ հանգստացան: Հետ ճանապարհվեցին:

— Այ թե կուրախացնենք մերոնց, — ասաց Խիմկովը: — Խրճիթում կտեղավորենք հիվանդներին, իսկ առողջները կմնան մակույկում: Կարելի յէ փնտուել, թե այստեղ մոտերքում ծովացուլի կամ ծովաշան խմբեր չկա՞ն արդյոք, այն ժամանակ վորով կղզադշենք:

Արհեստագործները ճանապարհին յեղջերուտեսան: Յեղջերուներն ալելի շատ լինում են տունդրայում, Մուրմանում և Հյուսիսային յերկրում, բայց յերբեմն հանդիպում են նաև կղզիներում:

— Զիսկե՞նք յեղջերույին, — հարցրեց Շարապովը Խիմկովին:

— Այո՛, լավ կլինի: Իջի՛ր ձորակը, յեղջերույին դեմք կտրիր:

Շարապովը վազեց ձորակը: Յերկար ժամանակ վոչինչ չեր լովում: Բայց հանկարծ լուսթյան մեջ չնչեց կըակոցը, իսկ հետո լսվեց Շարապովի հեռավոր կանչը:

Խիմկովը, նրա վորուն և վերիդինը գնացին ձու-  
րակը և հեռվից տեսան Շարապովին:

Նա գլխարկն եր թափահարում, իսկ ձյան վրա,  
վոչ հեռու, յերեվում եր յեղջերույի մաքրեցին:

Կես ժամից յեղջերույին մաքրեցին: Միսը չորս  
մասի բաժանեցին և բեռը շալակած քայլեցին դեպի  
ափը:

Շուտով Հասան այն նշանին, վոր թողել ելին ա-  
միին, յերբ զնացել ելին խրճիթը փնտուելու:

— Տղե՛րք, մեր մակույկը վոնց վոր չի յերե-  
վում, — ասաց անհանդիստ ձայնով Խիմկովը:

— Իսկ ո՞ւր ե կորել, — հարցրին նրա ուղեկիցնե-  
րը:

Ամին սառույց ել չկար: Արևմտյան քամի յեր  
բարձրացել, քշել սառույցները և նրանց հետ միասին  
յերեգի, մակույկը. կարող ե նաև մակույկը ջախջախ-  
ված լիներ սառույցներից և սուզված:

## ՄԵՆԱԿ՝ ՍԱՐՑԵ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Ծովի վրա մակույկի վոչ մի նշան չկար: Հուսա-  
հատությունը համակեց նրանց: Յերկար ժամանակ  
կանգնեցին ամին և անհույս նայում ելին դեպի մա-  
ռախլապատ հեռուները:

— Ի՞նչ անենք, — ասաց Ստեպան Շարապովը:

— Ստիպված ենք ապրել կղզում, մինչեւ վոր մեր  
բախտից մի վորեւ արհեստագործական նավ գա այս  
կողմեր, — պատասխանեց Խիմկովը: — Բայց սակավ  
են գալիս այս կողմերը, — ավելացրեց նա:

— Դե՛, տղե՛րք, կարիք չկա վշտանալ, — ասաց  
Ֆյուդոր Վերիդինը: — Կապրենք այստեղ, հո չենք մեռ-  
նի:

— Ա՛յ թե գործ բացվեց, — ասաց ավագ Խիմկո-  
վը և սրանց թքեց գետնին:

— Այսո՛, ինչպես յերեւմ ե, ալետք ե տեղավոր-

վել նոր բնակարանում, — փորձեց կատակել յերիտասարդ Խիմկովը:

Բայց վոչ վոք չժպտաց: Բոլորի սիրոն ել սևացել եր: Աշուն եր գալիս, և հաղիվ թէ կարելի լիներ հուսալ, վոր այդ ժամանակ վորեւ արհեստագործական նավ կտա հեռավոր Գրումանտը:

Չորս արհեստագործները տխուր վերադարձան խրճիթը: Նրանք վատ անցկացրին առաջին գիշերը ամայի կղզում: Վոչ վոք գրեթե չքնեց: Ամեն մեկը ծանր մտածմունքի մեջ եր թաղված:

Վաղ առավուտյան Խիմկովին ընկերներին վեր կացրեց և ասաց.

— Պետք է ձմեռելու պատրաստվել: Ժամանակ կորցնել չի կարելի: Նախ և առաջ պետք է ինչքան կարելի յե շատ վառելիք հավաքել: Ափին լողաթեր<sup>1)</sup> կան: Պետք է ինչքան կաբելի յե շատ հավաքել, թե չե առանց վառելիքի ձմռանը կսառչենք: Իսկ հետո արդեն պետք է հոգալ ուտելիքի մասին:

Չորսով ափ գնացին և սկսեցին փայտեղեն քաշտալ գեղի խրճիթը: Նրանք ամեն որ աշխատանքի ելին դուրս գալիս, իսկ Ստեպան Շարապովը յերբեմն գնում եր յեղջերու վորսալու: Նրան հաջողվեց տասը յեղջերու խփել: Յեղջերույի միսը ձյան մեջ թալեցին, իսկ մորթիներից տաք կոչիկներ և վերմակներ պատրաստեցին:

Շուտով բոլոր փամփուշտները կրակվեցին: Ինչո՞վ վորս անել: Զլցված հրացանից ի՞նչ ոգուտ: Բոլորը վհատվեցին:

— Ի՞նչ անենք, — հարցրեց Շարապովը:

— Մի կերպ կապրենք, կարիքը հնարագետ կըդաբձնի, — ասաց Խիմկովը:

1) Լողաթե և կոչվում անտառանյութը — տախտակներ, փոքրկից ջարդված նավերի բեկորներ, ափ նետված գերաններ և փայտեր:

Մի անգամ ավելին գտան մի տախտակ՝ վրան յեր-  
կաթե կեռ և մի քանի մեծ մեխ: Կեռը գործածեցին  
մուրճի տեղ: Նրանով տափակացրին մեխերը, նրան-  
ցից նիղակի ծայրեր պատրաստեցին և սկսեցին նրան-  
ցով սպիտակ աղվես վորսալ:

Յեկալ ողոստոս ամիսը: Սկսվեցին սառնամանիք-  
ները: Զյուն յեկալ: Զմեռը հաստատվեց: Որեն անց-  
նում էյին իրար հետևեց: Բայց շուտով կարձ ցերեկ-  
ներն ել անցկացան: Սկսվեց համատարած գիշերը:

— Այստեղ տոներն ել կմոռանաս, որվա հաշիվն  
ել կորցնես, — ասաց մի անգամ Վերիգինը:

— Այստեղ ի՞նչ տոն, ի՞նչ բան, — պատասխանեց  
Խիմկովը:

Սակայն Վերիգինը մտածեց որացույց պատբաս-  
տել: Նա դանակով զավաղանի վրա գծեր փորեց, ամեն  
մի յոթներորդ գիծը մյուսներից ալելի խորն անելով:  
Այդ լայն գծերը նշանակում եյին «կիրակի որերը»:

— Դատարկ բան ես մտածել, Ձյուղո՞ր, — ասաց  
Խիմկովը, նայելով, թե ի՞նչպես ե Վերիգինը «ոբա-  
ցույց» պատրաստում: — Զե՞ վոր մենք հիմա ել որերի  
հաշիվը կորցրել ենք: Հետո, ի՞նչպես կհիշես քո որա-  
ցույցում որերը, յերբ մինչև մարտ ամիսը շարունակ  
գիշեր ե լինելու:

— Այս, յերբ պառկենք քնելու, գծիկի վրա խաչ  
կդնեմ, — այդ կնշանակի թե մի որ անցավ:

— Դե՛, լավ, արա՞:

Մի անգամ վորսն ինքը յեկալ վորսորդների մոտ:  
Ինչ վոր մի գիշեր դրաի դռան մոտ խշոտոց լովեց:  
Շուտով սկսեցին դուռը ճանկոել: Ինչ-վոր մեկը կամե-  
նում եր ներս մտնել:

— Արջ ե, տղե՛րք, — ասաց Խիմկովը: — Վերցրե՛ք  
նիղակները:

Բոլորը վեր թռան անկողիններից, վերցրին փայ-  
տի նիղակները, իսկ Խիմկովը վերցրեց կացինը:

— Դե՛ս, տղե՛րք, անզգույշ չլինեք: Հենց վոր ար-

Ջը գլուխը դռնից ներս կիսոթի, խիեցեք նիղակով։  
Աշխատեցեք ինչքան կարելի յե խորը խրել նրա կոկոր-  
դը։

— Կաշխատենք։

Խիմկովը կրակ վառեց ոջախում, վորպեսզի խրճի-  
թում լույս լինի, և բոլորը կանգնեցին դռան մոտ։  
Արջն արդեն հաշտումն եր։ Նա չոշափեց դուռը և  
սկսեց թաթերով բաց անել։ Մի բոպելից արջի գլուխը  
կիսով չափ դռնից ներս յեկավ, և այդ իսկ պահին յե-  
րեք նիղակ մեկ անգամից խրվեցին արջի մարմնի մեջ։  
Նույն բոպելին ինքը Խիմկովը սկսեց կացինի հաբած-  
ներ տեղալ։

Արջը, այդպիսի գիմաղրություն չսպասելով, ա-  
ռաջին պահին ապչեց, բայց հետո նետվեց խրճիթը,  
յերեք նիղակներն ել ջարդվեցին և արջը թավալվեց  
Ստեղան Շարապովի վրա։ Բայց Խիմկովը քնած չեր։  
Նա հետեւից նստեց արջի մեջքին և ամբողջ թափով  
նրա գանգը ճեղքեց կացինով։ Արջը փռվեց հատակին,  
և վորարդները վերջ տվին նրան։

— Այ թե լավ հյուր բարեհածեց դաւ, — ասաց  
Խիմկովը, ճակատի քրտինքը սրբելով։

— Լավ վոր ժամանակին գլուխը ճեղքեցիր, — ա-  
սաց Ստեղանը, — թե չե արջը լավ եր ինձ ճմոռում։

— Ե՞ւ, հիմա ել արջի միս ունենք, — կատակեց  
Ֆյոդոր Վերիգինը։

Արջին քերթեցին։ Մորթին մաքրեցին։ Միսը կո-  
տորեցին։ Միսը կոտորելիս վորսորդները նկատեցին,  
վոր արջի յերակները շատ ամուր են և հեշտությամբ  
են թել-թել բաժանվում։

— Իսկ չե՞ վոր արջի յերակից կարելի յե նետաղե-  
ղի լար չինել, — ասաց յերիտասարդ Խիմկով-վոր-  
դին։

— Այդ ել բան ե, — պատասխանեց հայրը։

Արջի հետ պատահած այս դեպքը չորսի համար ել  
առնի պես եր։ Բոլորն ուղախացան։

Սկսվեց բեվեռային ձմեռը։ Գիշեր—ցերեկ մութ երազորս անել անկարելի յեր։ Այնպիսի սառնամանիքներ եյին, վոր չունչը բռնվում եր։ Դժբախտ ծովագնացները դրեթե ամբողջ ժամանակ նստում եյին խրճիթում։ Խրճիթն ամեն կողմից ձյունով եյին պատել, վոր քամին տաքությունը չտաներ։ Խրճիթում, յերբ ոջախրչեր վառվում, կատարյալ խավար եր։ Այդպես մթության մեջ չորսն ել պառկում եյին յեղջերույի մորթիով ծածկված անկողինների վրա։

Բոլորն ել կարոտել եյին հարազատներին։ Մտածում եյին, թե յերբեքցե կընկնե՞ն արդյոք հայրենիք։ Մխիթարական մտքեր քիչ եյին դալիս։ Խորը տիրությունը համակում եր բոլորին։


Վոչ վոք չգիտեր, թե քանի՛ ամիս են ապրում կղզում։ Ժամացույց չունեյին։ Այն ժամանակ ժամացույցն ընդհանրապես հազվագյուտ բան եր։ Արևը չեր յերեսում յերկնքի վրա, շուրջ բոլորը շարունակ գիշեր եր։ Մի բան եր մնում, — պառկել և քնել։ Յերբ պառկելը ձանձրացնում եր, մեկն ու մեկը վեր եր կենում, կրակ եր վառում ոջախում, ճաշ եր յեփում։ Ճաշից հետո դարձյալ պառկում եյին։ Այդպես ել գնում եր ժամանակը։

Մի անգամ Ստեղան Շարապովը խրճիթից դուրս յեկավ, վոր մի քիչ քայլի։ Մի բոպե հետո նա ներս վաղեց։

— Տղե՛րք, շուտով արեվը դուրս կդար, արեվելքում յերկինքը սկսել ե սպիտակել։

Բոլորը խրճիթից դուրս վաղեցին և սկսեցին նայել գեպի արեվելյան կողմը։ Այնֆեղ իսկապես վոր մութ յերկինքը մի քիչ ավելի լուսավոր եր, քան մյուս տեղերում։ Ամեն որ սկսեցին հետեվել, թե ի՞նչպես եր յերկինքն արեվելքում լուսավոր դառնում։ Վերջապես ծովի վրա յերեվաց արեկի մի ծայրը։ Բայց մի քանի բոպեյից դարձյալ մայր մտավ, և սառցե անպատում դարձյալ խավարը պատեց։

Հաջորդ որը ծովի վրա յերեվաց արդեն արեի կե-  
ար, իսկ մի քանի որից արեվն արդեն բավական բարձ-  
րանում եր յերկնքի վրա, և համեմատաբար յերկար  
ժամանակ մնում այնուեղ:



Սպիտակ արջի վորս

— Ե՛ւ, — տղերք, ձմեռն անցկացրինք, — ասաց  
Խիմկովը:

Բոլորի աչքերում արցունքներ յերեացին: Նրանք  
գրկեցին իրար:

Բայց չորսից վոչ մեկը չգիտեր, թէ վո՞ր ամիսն և  
և ի՞նչքան ժամանակ են անցկացլել կղզում:

Որեցոր արեն ավելի ու ավելի յեր բարձրանում

յերկնքում, և արևկող տեղերում ձյունը սկսում էր  
հալել: Շուտով հալված տեղերում յերեաց մամու-  
ռը: Դեպի կղզին թռան սագերն ու սուզահավերը:  
Սկսեցին վազ տալ սպիտակ աղվեսները: Խիմկովն ու  
ընկերները սկսեցին վորսի զնալ:

Նիզակներից բացի, Ստեղան Շարապովը նետաղեղ  
ել եր շինել: Ամին նա գտել եր յեղելնու արմատ,  
դանակով պատրաստել եր, իսկ լարը շինել եր արջի  
յերակից: Սրածայր նետեր եյին շինել ծայրը սլած  
մեխերից:

Այդ նախնակարյան գենքով նրանց հաջողվեց սպա-  
նել մի քանի յեղջերու և յերեք սպիտակ աղվես: Յեղ-  
ջերույի թարմ միան ամրացրեց նրանց ուժերը, և նը-  
բանք սկսեցին նորչեց փայտեղեն հավաքել ափունքից:  
Յերկար ձմեռվա ընթացքում նրանք ահագին փայտ  
եյին վառել:

Փայտեղեն հավաքելիս, նրանք հուսալի աչքերով  
նայում եյին սառուցից մաքրված ծովին: Ամեն ոք  
նայում եյին նրանք, թե ծովի վրա չի՞ յերեվում արդ-  
յոք արհեստագործական մի նավ, վորին կարելի լիներ  
նշաններով իմաց տալ իրենց գոյության մասին:

Բայց որերն անցնում եյին իրար հետեւից, իսկ  
ծովի վրա վոչ մի նավ չեր յերեվում: Այդպիսի ապար-  
դյուն սպաման մեջ անցավ ամբողջ ամառը: Դարձյալ  
արեւ մայր մտավ, դարձյալ սառնամանիքներ և ձյան  
բուքեր սկսվեցին: Վրա հասավ յերկբորդ ձմեռը:

Կարոտով և տիրությամբ լիցուն չորս գժրախանե-  
րը նորից փակվեցին իրենց զառամ խրճիթում, և նո-  
րից ձգվեց յերկար, խավար բեկեռային գիշերը:

### ՅԵՐԿՐՈՐԴ ԶՄԵՌՈՒՄԸ

Յերկբորդ ձմեռումը սառցե կղզում նույնքան  
տիրուր եր ու անձկալի, վորքան առաջինը: Նրանց  
միակ զվարճությունը հյուսիսափայլը դիտելն եր:  
Հյուսիսափայլը կարելի յե տեսնել միայն հյուսի-

սում: Յերկար ու մութ գիշերները յերկնքի վրա հանկարծ յերեվում ե առանձնահատուկ մի լույս: Նախ լույսը փայլում ե յերկնքի մի ծայրում, իսկ հետո ավելի ու ավելի յերաճանում: Հետո յերկնքի վրա յերեվում ե մեծ, գույնզույն ծիածան, վորն ասեաքսամու շնչից փողփողում ու յերերվում ե: Հետո ծիածանը բաժան-բաժան ե լինում, և յերկնքի վրա սկսում են շարժվել մեծ սյուներ կամ գոտիներ: Այդ ժամանակ թվում ե, թե ամբողջ յերկինքը փառվում ե և յերկնային հրդեհը մի տեղից մյուսն ե նետվում: Բայց մի քանի բոպե անց լույսը մարում ե յերկնքում, և նորից սկսվում ե մութ գիշերը, եւ ավելի յետիքում մարդու սիրալ:

Սակայն Խիմկովն իր ընկերներին համոզեց ինչքան կարելի յերես պառկել: Նրանք լամպ եյին շինել, վորի մեջ յեղջերույի յուղ եյին վառում: Լամպը մի փոքրիկ կավե թաս եր, վորը Թյողոր Վերիգինն եր շինել:

Պատրույգը լաթից եյին պատրաստել: Յերբ ոջախի կրակը դադարում եր լուսավորել խրճիթը, վառում եյին այդ լամպը, և աղոտ բոցը լուսավորում եր աղօքատիկ քողարիկը: Այդ լամպի շուրջը նստած, բոլոն ել աջլսատում եյին վորեե բանով զբաղվել — արջի յերակից թել, վոսկորեց կամ մեխից ասեղ եյին պատրաստում:

Բոլորի հագուստն ու կոշիկները անցած տարում մաշվել ու քրքրվել եյին: Հարկավոր եր յեղջերույի մութուց հագուստ կարել:

Առաջին ձմռանը չորսից վոչ մեկը չհիվանդացալ, բայց յերկրորդ ձմռանը նախ հիվանդացավ իվան Խիմկով կրտսերը, իսկ հետո Թյողոր Վերիգինը: Յերիտասարդ Խիմկովը շուտով սկսեց լավանալ, իսկ Վերիգինը սկսեց նիհարել:

Նա լնդախտով եր բռնվել: Լնդախտով հաճախ հիվանդանում են բեվեռային յերկրների բնակիչները:

Անդախտը նրանից եւ սկսվում, վոր մարդը թուլանում  
է: Ամբողջ ժամանակ ուզում եւ պառկել: Հետո ցավեր  
են սկսվում հոդերում: Մարմնի ամբողջ արյունը փչա-  
նում եւ: Մարդու բերնից վատ հոտ եւ գալիս: Լնդերն  
ուռչում, կապտում են, և նրանցից սկսում եւ ուև ար-  
յուն հոսել: Դեմքը ուռչում եւ, վոտքերը նույնպես,  
վոտքերի վրա վերքեր են առաջանում: Մարդը շուտով  
մեռնում եւ: Լնդախտը ստացվում եւ վատ և վոչ թարմ  
ուտելիքից:

Շուտով Ֆյոդոր Վերիգինն այնքան թուլացավ, վոր  
չեր կարող քայլել և շարունակ պառկած եր ու ցավից  
հառաչում եր: Մի քանի շաբաթից նա մեռավ: Ֆյո-  
դորի մահը շատ ուժեղ ազդեցություն գործեց բոլորի  
վրա: Ամեն մեկը մտածում եր իր մասին, թե մի գուցե  
իրենն ել նույն ճակատագիրն եւ սպասում:

Տիրեցին, վշտացան Ֆյոդորի համար: Տան մոտ  
ձյան մեջ փոս փորեցին և նրան թաղեցին այդ փոսի  
մէջ: Բնկերոջ թաղումից հետո յերեք ծովագնացները  
տիսուր-տրտում վերադարձան, և ել ավելի ծանր  
դարձավ նրանց սրանում:

Յերկրորդ ձմեռը, սակայն, մնացածների համար  
բարեհաջող անցավ: Մի քիչ հիվանդացավ ծերունի  
Խիմկովը, բայց գլուխն ազատեց, լավացավ: Շուտով  
դարձյալ յեկավ գարունը: Դարձյալ թռան յեկան թըս-  
չունները, ծովի վրա յերեվացին ծովային գաղանները:  
Դարձյալ սկսվեցին նայել գեղի ծով, վորսորդություն  
անել և փայտեղեն հավաքել: Յեկ կյանքն սկսեց ըն-  
թանալ իր կարգով: Դարձյալ սկսեցին սպասել, թե  
նավ չի յերեվում արդյոք ծովի վրա:

Բայց յերկրորդ ամառն ել նավ չերեկաց: Սկսեցին  
պատրաստվել յերրորդ ձմեռմանը: Աշխատանքի և  
վորսորդության մեջ աննկատ անցավ կարձ ամառը:  
Դարձյալ արել թաղնվեց կես տարով: Դարձյալ  
սկսվեցին փոթորիկն ու ցուբարը: Յերեքից  
յուրաքանչյուրը, նայելով, թե ինչպես արել մայր եւ

մտնում ձմեռվա համար, ինքնիրեն մտածում եր. «կլի-  
ճակլի» ինձ արդյոք նորից տեսնել կարմիր արկը»:

## ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՌՅԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Անցավ ելի մի ձմեռ, նրանից հետո յերբորդ ամա-  
ռը, իսկ հետո չորրորդը, հինգերորդը և վեցերորդը:  
Զմեռները կղզում ամբողջ շաբաթներով մռնչում եր-  
փոթորիկը, արհեստագործները տնից գուրս չելին գա-  
լիս: Զմանը ճյունն այնպես եր թաղում խբճիթը, վոր  
դարնանն արհեստագործները հազիվ հազ կարողանում  
ելին քանդել այն:

Յերեք ծովագնացները մենավոր կյանքով ապրում  
ելին սառուցի ու ճան մեջ: Ամեն ամառ նրանք հու-  
սալի սրտով դուրս ելին սողում իրենց խրճիթից և նա-  
յում դեպի ծով, — չել՝ յերեվում արդյոք վորեւ մի  
նավ: Համենայն գեպս բարձր բլուրի վրա խարույկի  
համար փայտ ելին գարսել: Խիմկովը վորդուն և Շա-  
րապովին ասել եր, վոր հենց առաջաստ յերեվա ծովի  
վրա, իսկույն վառեն խարույկը, դրանից նավաստինե-  
րը կիմանան, վոր կղզում կենդանի մարդիկ կան:

Բայց ամառն անցնում եր ամառվա հետեւից, իսկ  
վոչ մի նավ չեր գալիս գեպի կղզին: Դժբախտ ծովա-  
գնացները, զգալով, թէ ինչպես են իրենց ուժերը թու-  
լանում. տարեց-տարի արդեն կորցնում ելին յերբենիցն  
իրենց հարազատ վայրեքը տեսնելու հույսը: Ամեն  
մեկն ինքն իր մեջ մտածում եր, վոր իրեն վիճակված  
ե մեռնել այդ սառցե կղզում, վոր այդ կղզին կլինի  
եր գերեզմանը: Յերեքի առողջությունն ել թուլացել  
եր: Ավելի քան հինգ տարի նրանք հացի պատառ չելին  
տեսել և սնվել ելին միայն յեղջերույի ու արջի մոռվ:  
Բոլորն ել գաղանների պես մազակալել ելին և միան-  
գամայն վայրենացել:

Վրա հասավ յոթներորդ ամառը: Դարձյալ սկսե-

ցին փայտեղեն հավաքել: Թեև վոչ վոք արդեն չեր հավատում սառցի գերությունից աղատվելուն, բայց և այնպես յուրաքանչյուրն աշխատում եր ինչքան կարելի յե յերկար մնալ ծովափին: Յուրաքանչյուրն այնուամենայնիվ հույս ունեք, վոր ահա ծովի վրա նավ կերեվա և կվերցնի իրենց: Բոլորը հույս ունեյին տուն վերադառնալ:

Բայց որերը դարձյալ անցնում եյին որերի հետեւից, իսկ ծովն ամայի յեր: Ամառն ելի մոտենում եր իր վախճանին, և նավագնացները սկսել եյին նոր ձմեռման պատրաստվել: Մի անդամ հանկարծ հեռվից մի նավ յերեվաց ծովի վրա: Առաջինը տեսավ Ստեփան Շարապովը: Ուրախությունից գլուխը կորցրած, Ստեփանը վազեց խրճիթը հայր և վորդի Խիմկովներին իմաց տալու համար:

— Նա'վ, նա'վ, — բղավեց նա ներս վազելով խըրճիթը:

— Շուտ խարույկ վառիր ծովափին, — բղավեց Խիմկովն իր վորդուն:

Մի ըսպեյից ծովափին վառվում եր խալույկը, և նրա ծխի բարձր սյունը դեպի յերկինք եր բարձրանում:

Յերեքով փայտ եյին նետում խարույկը և ագահաբար նայում դեպի ծով, ուր հեռվում լողում եր նավը:

« Կնկատե՞՞ն մեր խարույկը, թե՞ չեն նկատի: Կդա՞՞ն մեր հետեւից, թե՞ կթողնեն բախտի քմահաճույքին», — մտածում եյին ծովագնացները:

Հանկարծ Ստեփան Շարապովը, վորի ուեսողությունն ավելի լավ եր, տեսավ, վոր նավը ծովում ե դեպի կղզին: Կես ժամից արդեն յերեվում եյին նավի վրայի մարդիկ: Յերեքում եր, թե ի՞նչպես մակույկ իջեցրին նավից: Մի քանի ըսպեյից մակույկն արդեն ափի մոտ եր:

— Ի՞նչ մարդիկ եք, — լսվեց մի կանչ մակույկից:

— Արիստանդելսկի արհեստագործներ։ Ազատեցե՛ք  
մեզ։

Մակույկի քիթը կպավ ափին, և ափ թռավ լոց-  
մանը։

— Բարե ձեզ։ Այդ ի՞նչպես եք ընկել այստեղ։

— Յերկար պատմություն ե, հետո կպատմենք,  
միայն թե մեզ վերցրեք հետներդ, — ասացին ուրա-  
խությունից գրեթե լաց լինելով յեղջերույշի մորթի  
հագած այդ յերեք մարդիկ։

— Լա՛վ, նստեցե՛ք, նայում կպատմեք ձեր ար-  
կածների մասին, — ասաց լոցմանը։

— Բայց բան-ման ունենք, — ասաց Խիմկովը, —  
ուզում ենք հետներս վերցնել։

— Լա՛վ, այդ ել կվեցնենք։

Սկսեցին խրճիթից դուրս քաշել յեղջերույշի, արջի  
ու աղվեսի մորթիները և յեղջերույշի ճարագի կտորնե-  
րը։ Ընդամենը մոտ յերկու հարյուր մորթի կար և  
վաթսուն փութ ճարագ։

Իրենց հետ վերցրին նաև նետաղեղը, նետերը, նի-  
ղակները, տեգերը, զոսկը ասեղները — բոլորը, ինչ  
վոր չինել եյին կղզում ապրած ժամանակում։

— Բայց ահազին բան ունեք, — ասաց լոցմանը, —  
մեկ անգամից չենք կարող փոխադրել։

— ԶԵ՞ վոր վեց տարի յե, ինչ այստեղ ենք ապ-  
րում, — ասաց Խիմկովը։

— Ի՞նչպես թե վեց տարի, — զարմացած հարցրեց  
լոցմանը։

— Այս, ամբողջ վեց տարի։ Պատրաստվում եյինք  
մեռնելու, բայց դուք յերեվացիք. . . Մեզ ազատեցիք։

Բոլոր մորթիներն ու ճարագը բարձեցին, և յերեք  
արհեստագործները սկսեցին Հրաժեշտ տալ իրենց սառ-  
ցե բանաբին, ուր ապրել եյին վեց յերկար ու ձիգ տա-  
րի։ Գնացին — ֆյուզոր վերիպինի գերեզմանի վրա։

— Մնաս բարով, Ֆեդյա, — ասաց Խիմկովը ար-

ցունքն աչքերին:— Բոլորից յերիտասարդը դու եյիր, բայց քեզ վիճակված չեր տուն վերադառնալ... Մնաս բարով:

Այն նավը, վորի վրա ընկան յերեք դժբախտ արհեստագործները, պատկանում եր մի արխանդելսկի վաճառականի: Նավը այժմ նոր Յերկրից Արխանդելսկ եր վերադառնում: Բայց քամին քշել եր դեպի Շոլիցրերդեն: Դրա չնորհիվ ել ազատվեցին տարաբախտ ծովագնացները: Նավի տերը, լսելով Խիմկովների և Շարապովի պատմությունը, ասաց.

— Զեղ Արխանդելսկ հասցնելու համար դուք ինձ կտաք ձեր ունեցած մորթիների և ճարապի կեսը:

— Թեկուղ բոլորը վերցրու, միայն թե հասցրու հայրենիքը, — ասացին յերեքը միասին:

— Լավ, տանելու համար ինձ 80 ոռորլի վճարեցեք:  
1749 թ. սեպտեմբերի 28-ին նավը հասավ Արխանդելսկ: Այն լուրը, թե նավով գալիս են յերեք հոգի, վորոնք վեց տարի ապրել են Գրումանտում, արագորեն տարածվեց քաղաքում, ահազին ժողովուրդ հավաքվեց նավամատուցում: Խիմկովը և Շարապովը տեսան իրենց ծանոթներին, բոլորը համբուրփում, լաց եյին լինում և չնորհավորում ազատության համար: Պառավ Խիմկովան, լսելով, վոր վերադարձել են ամուսինն ու վորդին, վորոնք անհետ կորել եյին վեց տարի, վազ տիեզ դեպի նավամատուցը: Տեսնելով նավի վրա կանգնած ամուսնուն և վորդուն, նա կամուրջով վաղ տիեզ դեպի նավը, բայց հետ յեկավ, ընկավ ջուրը և քիչ մնաց խեղղվեր: Ամբողջ Արխանդելսկը հետո յեկավ Խիմկովների խրճիթը՝ տեսնելու համար նրանց, վորոնք ամբողջ վեց տարի ապրել եյին Գրումանտում ցրտի ու խավարի մեջ: Խիմկովների և Շարապովի պատմությամբ հետաքրքրվեց նահանգապետը: Նա յերեքին ել կանչեց իր մոտ, հարկադրեց պատմել Գրումանտում անցկացրած կյանքի մասին: Այդ պատմու-

թյունն այնքան հետաքրքիր եր, վոր նահանգապետը  
վորոշեց հայր և վորդի Խիմկովներին Պետերուրդ  
ուղարկել: Պետերուրդում Խիմկովները յեղան Գի-  
տությունների ակադեմիայում, գիտնականներին  
պատմեցին իրենց արկածների մասին, ցուրտ յերկըր-  
ների բնության մասին: Բայց այն ժամանակվա ոռու  
գիտնականներն այնքան ել չհետաքրքրվեցին այդ  
պատմությամբ, նույնիսկ չուզեցին լսել Խիմկովնե-  
րին, և միայն մի Փրանսիացի գիտնական, վորն այն  
ժամանակ Պետերուրդումն եր, մանրամասն հարց ու  
փորձ արագ Խիմկովներին նրանց արկածների մասին և  
այդ բոլորը գրի առաջ ու հետո տարագրեց Փարիզում:

---

Ներկայումս շատ բան ե փոխվել նաև հեռավոր  
Հյուսիսում: Ճիշտ ե բեմեռային բնությունը մնում է  
առաջվա պես դաժան, կղզիները սառուցյալ ծովում  
սառուցով և ճյունով են ծածկված, իսկ ծովի վրա  
սառցասարեր են լողում, բայց Խորհրդային իշխանու-  
թյան որոք կենդանանում է նաև անբարեհամրույր, դա-  
ժան Հյուսիսը: Այժմ խորհրդային իշխանությունը բե-  
մեռային կղզիներում շինում է ավաններ, գիտական  
կայաններ, ուսումնակայաններ: Ամեն ամառ սառուցյալ  
ծովն են գնում սառցահատները, վորոնցով ծովային  
գաղաններ են վրասում և զանափան ապրանքներ են  
փոխադրում Հյուսիս: Շոլիցրեզենում այժմ քարա-  
ծուի են հանում, այնտեղ տարին բոլոր շատ ժողո-  
վուրդ ե ապրում, ավաններում ելեքտրականություն  
և վառվում, ուսդիս կա:

Յեթե յերեմն պատահում ե, վոր մի վորեկե  
նավ ջարդում են սառուցյաները, և արհեստագործները  
մնում են սառցի անապատում, ապա խորհրդային կա-  
ռավարությունն արագ կերպով ոգնություն ե կազմա-

կերպում նրանց ազատելու համար։ Խորհրդային ոգա-  
չուները փնտռում են նավաբեկյալներին, նրանց տեղը  
ցույց են տալիս սառցահատներին կամ իրենք են իջ-  
նում սառույցի վրա ու վերցնում աղետայալներին։

Բոլորը հիշում են չելյուսկինյանների փրկու-  
թյունը։ Սառուցյալ ծովի սառցե կապանքներից ազա-  
տելու շատ ուժիչ դեպքեր ել են տեղի ունենում ամեն  
ամառ հեռավոր հյուսիսում։ Տարեց տարի դաժան  
Սառուցյալ ծովն ավելի ու ավելի յե հնազանդվում  
մարդուն։



A. 1938.

ԱԿՏ № 1

Վկառք 1.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035616

ԳԻՐ 65 Կ.

(ՀԱ)

551

3

ՀԱ.Պ.Մ.  
3-747  
A II  
35616

Н. К. ЛЕБЕДЕВ  
АРХАНГЕЛЬСКИЕ РОБИНЗОНЫ  
Гиз ССР Армении, Ереван 1937